ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2022թ. դեկտեմբերի 10-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

<u>Նիստին մասնակցում էին՝</u>

<u>Կոմիտեի անդամներ</u>

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Հաշվի առնելով ենթադրյալ կարգապահական խախտման գործով Կոմիտեի անդամ Բաբկեն Ղալոյանի՝ այլ հանգամանքներով ներգրավվածությունը՝ վերջինս, ղեկավարվելով Կանոնակարգի 10.02 կետով, հայտնեց ինքնաբացարկ և չմասնակցեց օրակարգի 6-րդ հարցի քննարկմանը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **03.12.2022թ-ի «Նոա»-«Լեռնային Արցախ» (ՊԼ-100) խաղի ժամանակահատվածում մարզադաշտում հաշիվը ցույց տվող էլեկտրոնային սարքին լուսատախտակի թերի ապահովում:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Նոա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 25.10 կետը և Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Նոա» ՖԱ ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

2. **04.12.2022թ-ի «Ալաշկերտ»-«Արարատ» (ՊԼ-096) խաղի ժամանակահատվածում «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ի կողմից պատվիրակի սենյակում ինտերնետ կապի չապահովելը:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ալաշկերտ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 25.15 կետը և Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

3. **04.12.2022թ-ի «Շիրակ»-«Ուրարտու» (ՊԼ-098) խաղի ժամանակահատվածում տեղի ունեցած ենթադրյալ կարգապահական խախտումների վերաբերյալ. 1) VIP հատվածում գտնվող «Շիրակ 2» թիմի մարզիչ Անդրանիկ Բարիկյանի կողմից մրցավարի հանդեպ վիրավորական արտահայտություններ թույլ տալը, 2) «Շիրակ» թիմի ադմինիստրատոր Սուրեն Սիմոնյանի կողմից մրցավարի երկրորդ օգնականի հասցեին հայհոյանքներ թույլ տալը, 3) «Շիրակ» թիմի երկրպագուների կողմից խաղի գլխավոր մարզչի հասցեին բազմաթիվ անգամներ վիրավորական արտահայտություններ և հայհոյանքներ թույլ տալը, 4) «Ուրարտու» թիմի երկրպագուների կողմից մեկ ճայթրուկի և մի քանի ծխային ռումբի կիրառում, 5) Մարզադաշտի լուսատախտակի անսարքություն, 6) «Շիրակ» թիմի մամլո քարտուղարի բացակայություն, 7) «Շիրակ» թիմի կողմից անվտանգության թերի ապահովում, 8) VIP հատվածում անցագրերի չկիրառում:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտումներ թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 22-րդ կետը, ինչպես նաև Կանոնակարգի 28-րդ հոդվածի 3-րդ կետը՝ վերոնշյալ 1-ին, 3-րդ և 8-րդ կարգապահական խախտումների համակցությամբ՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի՝ 250,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Շիրակ» թիմի ադմինիստրատոր Սուրեն Սիմոնյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 37-րդ կետը՝ վերջինիս որակազրկել մինչև 2023 թվականի մարտի 31-ը ներառյալ և «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 ՀՀ դրամի չափով:

3) Հաստատված համարել «Շիրակ» թիմի և «Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝
   ա) «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30.000 ՀՀ դրամի չափով,
   բ) «ՖԱ ՈՒրարտու» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 ՀՀ դրամի չափով։
4) Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 25.10 կետը և Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի վաթսունապատիկի՝ 60.000 ՀՀ դրամի չափով։
5) Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 40-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30.000 ՀՀ դրամի չափով։
6) Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 56-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով։

4. 05.12.2022թ-ի «Արարատ-Արմենիա»-«Փյունիկ» (ՊԼ-097) խաղի ժամանակահատվածում ենթադրյալ կարգապահական խախտումների վերաբերյալ. 1) «Արարատ-Արմենիա» թիմի երկրպագուների կողմից ֆուտբոլիստ Յուսուֆ Օտուբանջոյի հասցեին հայհոյանքներ թույլ տալը, 2) «Արարատ-Արմենիա» թիմի երկրպագուների կողմից ձայնային ճայթրուկների պայթեցում, 3) Մրցավարի առաջին օգնականի մոտ «Արարատ-Արմենիա» թիմի երկրպագուների կողմից ձայնային ճայթրուկի նետում, 4) «Արարատ-Արմենիա» թիմի երկրպագուների կողմից ծխարձակող միջոցների կիրառում, 5) «Փյունիկ» թիմի երկրպագուների կողմից պիրոտեխնիկայի օգտագործման արդյունքում մարզադաշտի գույքի վնասում, 6) «Փյունիկ» թիմի երկրպագուների կողմից բենգալյան կրակների և ծխարձակող միջոցների կիրառում, 7) «Փյունիկ» թիմի երկրպագուների կողմից ֆայեռի կիրառում, 8) «Փյունիկ» թիմի երկրպագուների կողմից ծխարձակող միջոցների, ձայնային ճայթրուկների և ֆայեռների կիրառում։

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 22-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով։

2) Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտումներ թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը, ինչպես նաև Կանոնակարգի 28-րդ հոդվածի 3-րդ կետը վերոնշյալ 2-րդ, 3-րդ և 4-րդ կարգապահական խախտումների համակցությամբ՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500,000 ՀՀ դրամի չափով։
3) Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով։
4) Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախտումներ թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը, ինչպես նաև Կանոնակարգի 28-րդ հոդվածի 3-րդ կետը՝ վերոնշյալ 2-րդ, 3-րդ և 4-րդ կարգապահական խախտումների համակցությամբ՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500,000 ՀՀ դրամի չափով։

5. 01.12.2022թ-ի «Լեռնային Արցախ-2»-«Ուրարտու-2» (ԱԽ-104) խաղի ժամանակահատվածում տեղի ունեցած ենթադրյալ կարգապահական խախտումների վերաբերյալ. 1) ՀՖՖ պատվիրակի կողմից հաստատված խաղի մեկնարկի հետհաշվարկի ձևաթղթի բացակայություն, 2) Հավատարմագրման համակարգի բացակայություն 3) Փոխարինումների միայն մեկ մեխանիկական վահանակի առկայություն։

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Լեռնային Արցախ-2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»։
2) Հաստատված համարել «Լեռնային Արցախ-2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 56-րդ կետը՝ «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով։
3) Հաստատված համարել «Լեռնային Արցախ-2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 75-րդ կետը՝ «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»։

6. 01.12.2022թ-ի «Արարատ-Արմենիա-2»-«Փյունիկ Ակադեմիա» (ԱԽ-103) խաղի ժամանակահատվածում հավատարմագրման համակարգի բացակայություն։

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ-Արմենիա-2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 56-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

7. **02.12.2022թ-ի «Գանձասար»-«ԲԿՄԱ 2» (ԱԽ-102) խաղի ժամանակահատվածում տեղի ունեցած ենթադրյալ կարգապահական խախտումների վերաբերյալ.1) Կարգադրիչների բացակայություն, 2) Դաշտի տեր թիմի պաշտոնյաների կողմից պահանջ՝ գնդակ մատակարարող երեխաների պարտականությունների դանդաղեցման վերաբերյալ, 3) Խաղի ավարտից անմիջապես հետո հանդիսատեսի ներխուժում խաղադաշտ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Գանձասար» թիմի կողմից կարգապահական խախտումներ թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 39-րդ կետը, ինչպես նաև Կանոնակարգի 28-րդ հոդվածի 3-րդ կետը՝ վերոնշյալ 1-ին և 3-րդ կարգապահական խախտումների համակցությամբ՝ «Գանձասար ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով,
2) Հաստատված համարել «Գանձասար» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Գանձասար ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

8. **02.12.2022թ-ի «Միկա»-«Սյունիք» (ԱԽ-107) խաղի ժամանակահատվածում տեղի ունեցած ենթադրյալ կարգապահական խախտումների վերաբերյալ. 1) Պահեստային դարպասների բացակայություն, 2) Մրցավարներին փոխարինման սարքին էլեկտրոնային ցուցատախտակ չտրամադրելը:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Միկա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Միկա ՍԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»,
2) Հաստատված համարել «Միկա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 75-րդ կետը՝ «Միկա ՍԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

9. **02.12.2022թ-ի «Դովեղ-10»-«Բենտոնիտ-Այգեհովիտ-10» (13Մ2-035) խաղի ուշ մեկնարկման վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Դովեղ-10» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «Դովեղ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

10. **02.12.2022թ-ին «Մուսալեռ-09» թիմի՝ սեփական դիմումի համաձայն ՀՖՖ մանկապատանեկան ֆուտբոլի Մ-14 տարիքային խմբի առաջնության հետագա մասնակցությունից հրաժարվելը:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Մուսալեռ 09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «Մուսալեռ-09» թիմին առաջնությունից՝ հաջորդ մրցաշրջանում միայն C խմբում հանդես գալու հնարավորությամբ և «Մուսալեռ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5000 ՀՀ դրամի չափով:

11. **04.12.2022թ-ի «Ուրարտու-2-07»-«Իջևան-07» (16B-003) խաղի ժամանակահատվածում «Իջևան-07» թիմի մարզիչ Արմեն Խաչատրյանի կողմից իր թիմի ֆուտբոլիստների հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալու վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Իջևան-07» թիմի մարզիչ Արմեն Խաչատրյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ վերջինիս որակազրկել մինչև 2023 թվականի մարտի 15-ը ներառյալ և «Նիկարմա ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10000 ՀՀ դրամի չափով:

12. **24.10.2022թ-ին «Նոա ՖԱ» ՀԿ բողոքի հիման վրա հարուցված N 01/10 կարգապահական վարույթի վերաբերյալ**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՖՖ բողոքարկման կոմիտեի 2022 թվականի նոյեմբերի 28-ին կայացած որոշումը՝ համաձայն որի «ՖԱ Ուրարտու» ՄՀԿ բողոքը բավարարվել է մասնակի և հաստատված է համարվել ակումբի մարզիչ Դմիտրի Կուդրյաշովի կողմից պատժի կրումը համաձայն ՀՖՖ ՖԿՀ սահմանված նախնական որոշման՝ այն է մեկ հանդիպումով որակազրկումը՝ 24.10.2022թ-ին հարուցված N 01/10 կարգապահական վարույթը կարճել: